արքայութիւն պարգեւեսցէ, և արդ մեք Թ՚իֆլիզեցիքս . . . [1])»։

Այս եկեղեցւոյ դրան մի խաչքարի վերայ միայն ՌԾԹ (1610) *թուականն էր երեւում։ Նոյն եկեղեցւոյ աւազանին ներքեւն գրած է.*

***«Սուրբ աւազանս յիշատակ է ի Քրիստոս հանգուցեալ Սանամթին՝ բարեխօսեցէք վասն հոգոյ Տէր Յովհաննէսին և իւր կողակցին ի Քրիստոս հանգուցեալ Սուլթան Կիւլին. Թվին ՌԼԶին* (1587)։**

Իսկ սուրբ Աստուածածնայ նորակառոյց եկեղեցին կառուցված է վեց սիւների վերայ արդեամբք բարեպաշտօն իշխան աղայ Պետրոսի Ներսիսեանց 1845-1850 *թուերին, որոյ տապանագիրն նոյն եկեղեցւոյ դրան առաջին կանգնած արձանաքարի վերայ հետեւեալն է, որ արժանաւոր մարդոյ արգինաւոր աշխատութեան վայելուչ դրուատ և դամբանական է իսկապէս։*

«Աղայ Պետրոս Յակոբեան Ներսիսեանց յազնուական տոհմէ Մէլիքեանց Հայաստանի պատուանուն Քաղաքացի և Ասպետ որդոյն Աննայի երրորդաստիճանի Հանգեաւ ի Տէր ի* 20 *Ապրիլի* 1856 *ամի»։

«Ընդէ՞ր կոթողք, հիմ և արձանք-վէմք քարակոփ՝ յարդարին.

[1]) Այս հին եկեղեցին աւերուած լինելով՝ յարգոյ եղբարք Լալայեանք Աղէքսանդրն և Բալաբէկն խոստացան եկեղեցւոյ սեղանոյ տեղը մատուռ շինել. իսկ շրջապատը Առաջնորդարան և աղայոց դպրոց. և այս մասին խնդրագիրն արդէն ուղարկել են նոքա առ Կաթուղիկոսն։